ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«22» 05 2024 թ.

№ [illegible]

«ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 03524692
ՀՀ, ք. Աբովյան Հատիսի 1/96
հեռ. +37493 68 00 06
էլ. հասցեն՝ vip-consalt@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության միջև 23.07.2021թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-21-10/10-2 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 03.03.2023թ. կնքված N 3 համաձայնագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 15-ը կատարել 80,000,000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 8,852,318 (ութ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր տասնութ) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն 71,147,682 (յոթանասունմեկ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր ութսուներկու) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագր 3.1.4. կետի «ա» ենթակետը՝ (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար) և «բ» ենթակետը՝ (Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մայիսի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 71,147,682 ՀՀ դրամի չափով չկատարված և 795,986 ՀՀ դրամի չափով դեռևս չնախատեսված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3,059,350 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 30.04.2024թ. և 403,980 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 36,280,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 10,672,152 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. մայիսի 31-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 36,280,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 10,672,152 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԵՐԱՆՈՍՇԻՆ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. մայիսի 31-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ